ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ՃՇՏՈՒՄ

Ձեր հանդեսի 2007 թ. № 1-ում (էջ 274–288) տպագրված է ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանի (այժմ հանգուցյալ) «Հայրենիքն անմոռաց է» հրապարակումը՝ նվիրված Վանին և Վանի հերոսամարտի հուշակոթողի կառուցմանը, որտեղ տեղ են գտել պատմական փաստերի սխալ մեկնաբանություններ և խեղաթյուրումներ: Նշված հրապարակումը նույն սխալներով ու խեղաթյուրումներով արտատպվել է նաև Լոս Անջելեսի Համավասպուրականի հայրենակցական միության «Վարագ» պարբերականում (2007 թ., № 54), առանց աղբյուրը հղելու:

Ձեր հանդեսի 275–276-րդ էջերում բերված է մի ցուցակ՝ վերնագրված «Վասպուրական» հայրենակցական միության հիմնադիր անդամները» և թվագրված՝ 1964 թվականով: Այն տարիներին Հայաստանում չկար և չէր էլ կարող լինել «Վասպուրական» հայրենակցական միություն: Հանդեսի վերը նշված էջերում ուղղակի բերված է այն ժամանակ Երևանում բնակվող անվանի մտավորականների և գիտաշխատողների անուններ, որոնք ստորագրել են հանրապետության ղեկավարներին ուղղված մի նամակի տակ, որով խնդրել են թույլատրել, որ Երևան–Էջմիածին ավտոմայրուղու հարևանությամբ կառուցվի Վանի հերոսամարտին նվիրված հուշակոթող: Եվ դա 40 տարի անց Վ. Հարությունյանը որակում է հանդուգն քայլ՝ համարելով նշված անձանց «Վասպուրական» հայրենակցական միության հիմնադիր անդամներ:

286-րդ էջում, «Հուշարձան» վերնագրի տակ, գրված է. «Հուշակոթողի կառուցումը հանձնարարվեց վանեցի շինարար Ժիրայր Ասլանյանին»: Սա արդեն բացահայտ կեղծիք է, քանի որ նշված անձը առհասարակ ոչ մի կապ չունի հուշակոթողի կառուցման հետ: Հուշակոթողի կառուցումը 1978–1981 թթ. ղեկավարել է Երքաղխորհրդի բարեկարգման վարչության շինարարության վերակառուցման վարչության պետ Ալբերտ Գալստյանը:

Խնդրում եմ Ձեզ, հանդեսի առաջիկա համարում տպագրել սույն նամակը, որպեսզի ընթերցողները և հետագայում նաև պատմաբան հետազոտողները զերծ մնան սխալ ու խեղաթյուրված տեղեկատվություններից:

ՌՈՄԻԿ ՀՈՎՆԱՆՅԱՆ
«Վան-Վասպուրական» ՀՀԿ նախագահ